

**Հարցաշար**  
**Առարկայական օլիմպիադայի**  
**«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի**  
**հանրապետական փուլ – 2022**

**9-րդ դասարան - 120 րոպե**

**N 1-4**

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

1. Ըստ ավանդության՝ Քրիստոսի Խաչելությունից հետո քանի՞ տարի է ապրել Ս. Մարիամ Աստվածածինը. *(0,5 միավոր)*

- 1) 25                                      3) 10                                      2) 13                                      4) 15

2. Ի՞նչ էր պատկերված Անիի պարսպին դրոշմված Բագրատունիների զինանշանի վրա.

*(0,5 միավոր)*

- 1) աղավնի և խաչ                                      3) խոյ և խաչ  
2) հովազ և խաչ                                      4) արծիվ և խաչ

3. Հայոց եկեղեցին տարվա մեջ քանի՞ անգամ է տոնում Ս. Գրիգոր Լուսավորչի հիշատակը:

*(0,5 միավոր)*

- 1) 1    3) 3  
2) 7    4) 4

4. Ո՞ր կաթողիկոսն է հրավիրել 1178 թ. Հռոմկլայի համահայկական եկեղեցական ժողովը.

*(0,5 միավոր)*

- 1) Բարսեղ Ա. Անեցի  
2) Գրիգոր Գ. Պահլավունի  
3) Գրիգոր Դ. Տղա  
4) Ներսես Դ. Շնորհալի

**N 5-9**

**Կառուցված պատասխանով առաջադրանքներ**

5. \_\_\_\_\_ քահանան մկրտում է Սալահունյաց Սուրեն իշխանի որդի Աթենադորոսին և վերանվանում Թեոդորոս: *(1 միավոր)*

6. Ծովքում Ս. Արիստակեսը հեթանոսական վարքուբարքի համար կշտամբում է տեղի \_\_\_\_\_ իշխանին: *(1 միավոր)*

7. 1844 թ. Կոստանդնուպոլսի նորընտիր \_\_\_\_\_ ը հրահանգում է արևմտահայ բոլոր եկեղեցիներում հիշատակել Ամենայն Հայոց հայրապետի անունը:  
(1 միավոր)
8. Արմաշի դպրեվանքը հիմնվել է 1889 թ. Արմաշ գյուղի \_\_\_\_\_ վանքում:  
(1 միավոր)
9. Ս. Գրիգոր Տաթևացին Ս. \_\_\_\_\_ ամենահայտնի աշակերտներից էր:  
(1 միավոր)

**N 10-11**

**Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից**

**10. Հեղինակի անունը համապատասխանեցնել աշխատության վերնագրին.**

(0,25 X 4 = 1 միավոր)

1. Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի
2. Նորայր արք. Պողարյան
3. Կյուրեղ Քիպարյան
4. Ղևոնդ Ալիշան

1	
2	
3	
4	

- ա. «Արշալույս քրիստոնեության հայոց»
- բ. «Բարի մարդ և բարի քրիստոնյա»
- գ. «Հոգևոր խրատներ»
- դ. «Հայ գրողներ»
- ե. «Պատմություն հայ հին գրականության»

**11. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին:**

(0,25 X 4 = 1 միավոր)

1. Բողոքական հայերը հիմնում են իրենց առաջին (ավետարանական) եկեղեցին:
2. Օսմանյան կայսրության հայ կաթոլիկները հատուկ զրոյամբ դիմում են սուլթանին՝ Հայոց եկեղեցուց անջատվելու և առանձին պատրիարք ու եկեղեցի ունենալու խնդրանքով:
3. Կոստանդնուպոլսում բացվում է առաջին հայկական բողոքական վարժարանը:
4. Գեներալ Պասկևիչը Թիֆլիսում ստեղծում է հայազգի գործիչներից և ցարական աստիճանավորներից կազմված գաղտնի հանձնաժողով:

- ա. 1827 թ.
- բ. 1829 թ.
- գ. 1846 թ.
- դ. 1844 թ.
- ե. 1834 թ.

1	
2	
3	
4	

N12-13

Աշխատանք սկզբնաղբյուրով

12. « .... գանգակների փողն էր հնչում, երիտասարդները գոչում էին, ծերերն աղաղակում էին և ցնծությամբ օրհնում Աստծուն, մանուկները խայտում էին, կանայք երկրպագությամբ ու լալով բոլորին զարհուրանք էին պատճառում, իսկ անօրենները նայելով զարմանում էին... »:

1. Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը: (1 միավոր)

---

2. Ո՞ր թվականի և ի՞նչ իրադարձության մասին է գրել հեղինակը: (1 միավոր)

---

13. «Ժամանակը բերեց և ժամանակն էլ տարավ այն».

1. Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը: (1 միավոր)

---

2. Ո՞ր իրադարձության մասին է խոսքը: (1 միավոր)

---

N 14-16

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացությունն պահանջող առաջադրանքներ

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունը չի համապատասխանում շարքի կազմման սկզբունքին: (0,5 միավոր)

Արթիկի թեմ, Կոտայքի թեմ, Սյունյաց թեմ, Շիրակի թեմ

---

14. 2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է ավելորդ: (0,5 միավոր)

Մկրտություն, Ձեռնադրություն, Տոնակատարություն, Հաղորդություն, Ապաշխարություն:

---

15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. (1 միավոր)

ա. Ս. Սարգսի տոն, Ս. Թարգմանչաց տոն, Ս. Վարդանանց տոն, Խաչվերաց,

բ. Ս. Գրիգոր Լուսավորչի տոն, Տյառնընդառաջ, Վարագա Ս. Խաչի տոն, Ս. Սարգսի տոն

գ. Ս. Թարգմանչաց տոն, Ս. Գրիգոր Լուսավորչի տոն, Ս. Վարդանանց տոն, Ս. Սարգսի տոն:

---

---

**15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված.**

*(1 միավոր)*

ա.Ս. Գրիգոր Նարեկացի, Ս. Մովսես Խորենացի, Ս. Եզնիկ Կողբացի, Ս. Վարդան Մամիկոնյան,

բ. Ս. Եզնիկ Կողբացի, Ս. Գրիգոր Նարեկացի, Ս. Ներսես Շնորհալի, Ս. Մեսրոպ Մաշտոց,

գ. Ս. Մեսրոպ Մաշտոց, Ս. Եղիշե, Ս. Կորյուն, Ս. Գրիգոր Տաթևացի, Ս. Ներսես Շնորհալի:

---

---

**16. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ:**

*(1 X 2 = 2 միավոր)*

- 1) VII դարի կեսերին պավլիկյան շարժման դեմ պայքարը գլխավորել է Թեոդորա Մամիկոնյան կայսրուհին:
- 2) Պավլիկյանները ժխտել են Հին Կտակարանը, եկեղեցական աստիճաններն ու կոչումները:
- 3) Պավլիկյան շարժմանը մասնակցել են միայն հայեր, հրեաներ և ասորիներ:
- 4) IX դարի երկրորդ կեսին պավլիկյաններին ամենամեծ հարվածն է հասցրել և կայսրության սահմաններից դուրս մղել հայազգի Բարսեղ I Մակեդոնացի կայսրը:
- 5) Արաբական իշխանությունները խրախուսել են պավլիկյան շարժումը, քանի որ այն խարխլում էր եկեղեցու և ազգի միասնության հիմքը:


**17. Շարադրանք**

*(4 X 0,5 = 2 միավոր)*

**Ներկայացնել Ս. Խաչին նվիրված տոների պատմությունները և տոնակատարությունները:**

Ս. Խաչի երևման տոն

Խաչվերաց

Վարագա Ս. Խաչի տոն,

Ս. Խաչի Գյուտի տոն